ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐՌՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

**ք. Աբովյան** **16/05/2024**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6/5
# ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 20 անդամներ:

Բացակա էին՝ Ատոմ Բադալյանը, Մելինե Գասպարյանը, Տիգրան Գեղամյանը, Մարգարիտա Հարությունյանը, Վրեժ Մամուլյանը, Նաիրա Մելիքյանը, Կարեն Սերոբյանը

**<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u>** Դիաննա Երեմյանը, Աննա Չոբանյանը, Եղիշե Ավետիսյանը, Վահան Սավադյանը

**<u>Նիստը վարում էր Համայնքի ղեկավար՝ Էդուարդ Բաբայանը</u>**

**<u>Նիստն արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար՝ Վանիկ Բաբաջանյանը</u>**

Նախքան նիստի օրակարգը ներկայացնելը Վ. Բաբաջանյանը հայտնեց, որ նիստին ներկա են Կամարիս բնակավայրից մի մի խումբ երիտասարդ մայրիկներ: Նիստի մասնակիցներն ողջունեցին վերջիններիս:

Նշվեց նաև, որ թիվ 29 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից ստացվել է համապատասխան արձանագրություն, որի համաձայն լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվել է «Հանրապետություն» խմբակցության հերթական հաջորդ թեկնածու Կարեն Վարդանի Սերոբյանին:

Վ.Բաբաջանյանը տեղեկացրեց, որ ավագանու բացակա անդամներից միայն Ատոմ Բադալյանի վերաբերյալ կա տեղեկատվություն՝ նիստից բացակայում է հարգելի պատճառով, մյուս ավագանու անդամների բացակայությունների վերաբերյալ տեղեկատվություն չի ստացվել:

**Լսեցին**

*ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների, Արովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ  է՝***

1. Հաստատել Արովյան համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 16-ի վեցերորդ նստաշրջանի հերթական հինգերորդ նիստի հետևյալ օրակարգը.

1) Կոտայքի մարզի Արովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 205-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

2) Նախադպրոցական կրթության միկրոծրագրին համաֆինանսավորումը ապահովելուն համաձայնություն տալու մասին.

3) Արովյան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 16-ի N 13-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին.

4) «Շող Մակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին.

5) «Գ.Վ.Հ. ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին.

6) «Նյու Ռոմա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին.

7) «Էկո ագրո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին.

8) «Նոգառա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին.

9) Արովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 217-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին.

10) Արովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 218-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին.

11) Արովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.

12) Արովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0304-0025 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

13) Արովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0304-0028 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

14) Արովյան համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 16-ի N 103-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

15) Արովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու

մասին.
16) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայի 7 շենքի թիվ 67 և թիվ 87 բնակարաններն անհատույց օտարելու մասին.
17) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Եղբայրության փողոցի 3 շենքի 30 բնակարանն ուղղակի վաճառքով օտարելու մասին.
18) Աբովյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Առաջարկվեց օրակարգի նախագծի 1-ին կետի 10-րդ ենթակետում ներառված հարցը հանել օրակարգից:

Նախագիծը հաստատվեց առաջարկված տարբերակով:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54-Ա/

**Լսեցին**

***ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 205-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և 90-րդ հոդվածի 1-ին մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է***՝
1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 205-Ն որոշմամբ հաստատված 2, 3 և 6 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն 1-3 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55-Ն/

**Լսեցին**

***ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻԿՐՈԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 10-րդ մասի և հիմք ընդունելով «Աբովյանի Ս. Անտոնյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի գրությունը (մուտք՝ 2024 թվականի մայիսի 6-ի N Պ-1033), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Համաձայնություն տալ Աբովյան համայնքի համաֆինանսավորմանը նախադպրոցական կրթության միկրոծրագրին՝ հատկացնելով 4 466 500 (չորս միլիոն չորս հարյուր վաթսունվեց հազար հինգ հարյուր) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N 13-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՀԱՆ ՍԱՎԱԴՅԱՆ/***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հաշվի առնելով Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հունվարի 25-ի N 07-Լ հրամանը Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 16-ի «Աբովյան համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին» N 13-Ա որոշմամբ հաստատված 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի մեջ կատարել հետևյալ լրացումը՝ N 14 ծրագրում ավելացնել «Աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական պլան»-ի կազմման 8-րդ միջոցառումը (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57-Ա/

**Լսեցին**

***«ՇՈՂ ՄԱԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԻԱՆՆԱ ԵՐԵՄՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման, հաշվի առնելով 2024 թվականի մայիսի 3-ին կայացած հանրային քննարկման արդյունքները, հիմք ընդունելով «Շող Մակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի գրությունը (մուտք՝ 2024 թվականի մարտի 28-ի N Տ-600), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Տալ նախնական համաձայնություն «Շող Մակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի գյուղ Վերին Պտղնի, Նոր թաղամաս 1-ին փողոց, 29 հասցեում առևտրահասարակական կենտրոն կառուցելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58-Ա/

**Լսեցին**

***«Գ.Վ.Հ. ՄԱՅՆԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԻԱՆՆԱ ԵՐԵՄՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի

Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման, հաշվի առնելով 2024 թվականի մայիսի 3-ին կայացած հանրային քննարկման արդյունքները, հիմք ընդունելով «Գ.Վ.Հ. ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի գրությունը (մուտք՝ 2024 թվականի մարտի 27-ի N Տ-587), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Տալ նախնական համաձայնություն «Գ.Վ.Հ. ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Կամարիս բնակավայրի Գյամրեզի անդեզիտաբազալտների հանքավայրի տեղամասում իրականացնելու օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստանալու նպատակով անհրաժեշտ աշխատանքներ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59-Ա/

**Լսեցին**

***«ՆՅՈՒ ՌՈՄԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԻԱՆՆԱ ԵՐԵՄՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման, հաշվի առնելով 2024 թվականի ապրիլի 12-ին կայացած հանրային քննարկման արդյունքները, հիմք ընդունելով «Նյու Ռոմա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրությունը (մուտք՝ 2024 թվականի մարտի 13-ի N Տ-502), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Տալ նախնական համաձայնություն «Նյու Ռոմա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ գյուղ Առինջ Բ թաղամաս 1-ին փողոց 44 և 44/2 հասցեներում բնակելի թաղամաս կառուցելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 60-Ա/

**Լսեցին**

***«ԷԿՈ ԱԳՐՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԻԱՆՆԱ ԵՐԵՄՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման, հաշվի առնելով 2024 թվականի ապրիլի 12-ին կայացած հանրային քննարկման արդյունքները, հիմք ընդունելով «Էկո ագրո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի գրությունը (մուտք՝ 2024 թվականի մարտի 13-ի N S-503), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Տալ նախնական համաձայնություն «Էկո ագրո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ գյուղ Առինջ Վ. Տերյան թաղամաս 15-րդ փողոց 2/2 և Մարշալ Բաբաջանյան թաղամասի 1-ին փողոց 18/1 հասցեներում բնակելի թաղամաս կառուցելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61-Ա/

**Լսեցին**

***«ՆՈԳԱՌԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԴԻԱՆՆԱ ԵՐԵՄՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման, հաշվի առնելով 2024 թվականի մարտի 22-ին կայացած հանրային

քննարկման արդյունքները, հիմք ընդունելով «Նոգառա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի գրությունը (մուտք՝ 2024 թվականի փետրվարի 14-ի N Տ-330), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Տալ նախնական համաձայնություն «Նոգառա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Արամուսի բազալտի հանքավայրի Նոգառա տեղամասում իրականացնելու օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքում ավագանու մշտական հանձնաժողովը ձայների մեծամասնությամբ հարցին տվել է դրական եզրակացություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 217-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի «Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը 2024 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարելու մասին» N 217-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝ որոշման 1-ին կետում 147-րդ տողից հետո լրացնել նոր՝ 148-185-րդ տողերով.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 148 | Համայնք Աբովյան, գ. Կամարիս 12-րդ փողոց 1 հողամաս | 1203,2 | 07-035-0143-0049 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2260.0 |
| 149 | Համայնք Աբովյան, գ. Կամարիս 12-րդ փողոց 3 հողամաս | 1200,0 | 07-035-0143-0047 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2260.0 |
| 150 | Համայնք Աբովյան, գ. Կամարիս 12-րդ փողոց 5 հողամաս | 1200,0 | 07-035-0143-0048 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2260.0 |
| 151 | Համայնք Աբովյան, գ. Կամարիս 12-րդ փողոց 6 հողամաս | 1219,1 | 07-035-0143-0064 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2290.0 |
| 152 | Համայնք Աբովյան, գ. Կամարիս 12-րդ փողոց 7 հողամաս | 1200,0 | 07-035-0143-0058 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2260.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 153 | Համայնք Աբովյան, գ. Կամարիս 12-րդ փողոց 8 հողամաս | 1219,1 | 07-035-0143-0063 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2290.0 |
| 154 | Համայնք Աբովյան, գ. Կամարիս 12-րդ փողոց 9 հողամաս | 1292,1 | 07-035-0143-0059 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2430.0 |
| 155 | Համայնք Աբովյան, գ. Կամարիս 12-րդ փողոց 11 հողամաս | 1242,9 | 07-035-0143-0054 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2340.0 |
| 156 | Համայնք Աբովյան, գ. Կամարիս 12-րդ փողոց 13 հողամաս | 1200,0 | 07-035-0143-0061 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2260.0 |
| 157 | Համայնք Աբովյան, գ. Կամարիս 12-րդ փողոց 16 հողամաս | 1234,8 | 07-035-0143-0052 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2320.0 |
| 158 | Համայնք Աբովյան, գ. Կամարիս 13-րդ փողոց 9 հողամաս | 1215,9 | 07-035-0143-0057 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2290.0 |
| 159 | Համայնք Աբովյան, գ. Կամարիս 13-րդ փողոց 11 հողամաս | 1233,6 | 07-035-0143-0045 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2320.0 |
| 160 | Համայնք Աբովյան, գ. Կամարիս 13-րդ փողոց 3 հողամաս | 1219,6 | 07-035-0143-0043 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2295.0 |
| 161 | Համայնք Աբովյան, գ. Կամարիս 13-րդ փողոց 5 հողամաս | 1219,6 | 07-035-0143-0044 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2295.0 |
| 162 | Համայնք Աբովյան, գ. Կամարիս 13-րդ փողոց 7 հողամաս | 1219,6 | 07-035-0143-0046 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2295.0 |
| 163 | Համայնք Աբովյան, գ. Կամարիս | 10000,0 | 07-035-0164-0005 | գյուղատնտեսական | վարելահող, այլ հողատեսք | 2500.0 |
| 164 | Համայնք Աբովյան, գ. Պտղնի | 1726,0 | 07-054-0332-0022 | գյուղատնտեսական | այլ հողատեսք | 350.0 |
| 165 | Համայնք Աբովյան, գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածքի 21-Ա թաղամաս 1/1 հողամաս | 339,4 | 07-054-0121-0017 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 1510.0 |
| 166 | Համայնք Աբովյան, գ. Գետարգել Հ. Վերդյան փողոց 15/1 հողամաս | 136,1 | 07-058-0003-0004 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 950.0 |
| 167 | Համայնք Աբովյան, գ. Գետարգել Հ. Վերդյան փողոց 21/15 հողամաս | 102,8 | 07-058-0002-0204 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 750.0 |
| 168 | Համայնք Աբովյան, գ. Գետարգել Հ. Վերդյան փողոց 21/14 հողամաս | 40,0 | 07-058-0002-0205 | բնակավայրերի | խառը կառուցապատման | 300.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 169 | Համայնք Աբովյան, գ. Գեղաշեն 1-ին փողոց 27/8 հողամաս | 63,8 | 07-023-0057-0026 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 80.0 |
| 170 | Համայնք Աբովյան, գ. Գեղաշեն 3-րդ փողոց 2-րդ նրբանցք 1/3 հողամաս | 155,2 | 07-023-0079-0023 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 200.0 |
| 171 | Համայնք Աբովյան, գ. Գեղաշեն 1-ին փողոց 75/1 հողամաս | 164,4 | 07-023-0036-0018 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 215.0 |
| 172 | Համայնք Աբովյան, գ. Առինջ Մ. Մկրտչյան թաղամասի 1-ին փողոց 33 հողամաս | 328,0 | 07-011-0272-0004 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 3450.0 |
| 173 | Համայնք Աբովյան, գ. Առինջ Աբովյան թաղամաս 11-րդ փողոց 14/1 հողամաս | 54,9 | 07-011-0985-0002 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 900.0 |
| 174 | Համայնք Աբովյան, գ. Առինջ Խ. Աբովյան թաղամասի 19-րդ փողոց 9/3 | 34,1 | 07-011-0050-0357 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 360.0 |
| 175 | Համայնք Աբովյան, գ. Առինջ Խ. Աբովյան թաղամասի 8-րդ փողոց 15 հողամաս | 69,1 | 07-011-0050-0294 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 730.0 |
| 176 | Համայնք Աբովյան, գ. Առինջ Գ թաղամասի 4-րդ փողոց 2/3 հողամաս | 1390,6 | 07-011-0241-0010 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 14700.0 |
| 177 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Ճուլշի թաղամաս 5/6 հողամաս | 36,0 | 07-002-0039-1833 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 165.0 |
| 178 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Ճուլշի թաղամաս 104 հողամաս | 38,1 | 07-002-0039-1834 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 170.0 |
| 179 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Երիտասարդական փողոց 5/14 | 35,4 | 07-002-0089-0390 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 380.0 |
| 180 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Գառնու փողոց 10/5 հողամաս | 43,6 | 07-002-0082-0454 | բնակավայրերի | խառը կառուցապատման | 460.0 |
| 181 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Հատիսի փողոց 48/1 | 4,9 | 07-002-0116-0457 | բնակավայրերի | հասարակական կառուցապատման | 130.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 182 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 7-րդ միկրոշրջանի 1-ին թաղամասի 111/1 | 706,3 | 07-002-0034-0272 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 4830.0 |
| 183 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 8-րդ միկրոշրջան 5-րդ թաղամաս 155/1 հողամաս | 40,0 | 07-002-0025-0246 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 300.0 |
| 184 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Ձորավար Անդրանիկի փողոց 7/7 հողամաս | 310,0 | 07-002-0117-0107 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 1400.0 |
| 185 | Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Արզնու խճուղի 4/2 հողամաս | 65,9 | 07-002-0071-0110 | արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության | արդյունաբերական օբյեկտների | 300.0 |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքում ավագանու մշտական հանձնաժողովը ձայների մեծամասնությամբ հարցին տվել է դրական եզրակացություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. 2024 թվականի ընթացքում օտարել կամ վարձակալության իրավունքով տրամադրել իրավահարաբերության պահին գործող Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշման համաձայն համայնքային սեփականություն ճանաչված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացված ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Աբովյան համայնքի սեփականություն ճանաչված ինքնակամ կառույցներն ուղղակի վաճառքի կարգով գնման նախապատվության իրավունքով

դրանք իրականացրած անձանց օտարման, իսկ գնման նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում՝ վարձակալության իրավունքով տրամադրման գործընթացն իրականացնում է Աբովյան համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով և գներով:
3. Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից գնման, իսկ այնուհետև վարձակալության իրավունքով տրամադրելու նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում գույքն աճուրդային կարգով օտարելու մեկնարկային գինը սահմանվում է անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող լիցենզավորված անձի կողմից գնահատված շուկայական արժեքի չափով, իսկ վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքում՝ մրցույթի պայմաններում, որպես մեկնարկային գին սահմանվում է ավագանու կողմից ընդունված վարձավճարի (վճարի) չափը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-054-0304-0025 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/***

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Վաչե Մալաքյանի հայտը (մուտք՝ 2024 թվականի ապրիլի 05-ի N Ք-2469), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***
1. Վաչե Մալաքյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի ապրիլի 14-ի N 14042023-07-0058 վկայական) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0304-0025 կադաստրային ծածկագրով 0.0639 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսություն կառուցելու նպատակով:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին

սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վաչե Մալաքյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-054-0304-0028 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/***

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Հարություն Քարտաշյանի հայտը (մուտք՝ 2024 թվականի ապրիլի 05-ի N Ք-2468), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Հարություն Քարտաշյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2023 թվականի ապրիլի 14-ի N 14042023-07-0144 վկայական) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0304-0028 կադաստրային ծածկագրով 0.06389 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսություն կառուցելու նպատակով:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հարություն Քարտաշյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66-Ա/

**Լսեցին**

***ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի N 103-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/***

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հիմք ընդունելով Ռիմա Գասպարյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի մայիսի 6-ի N Բ-3264), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 16-ի «Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 3 շենքի թիվ 2 բնակարանն անհատույց օտարելու մասին» N 103-Ա որոշման 1-ին կետում «Ռիմա, Սլավիկ, Արմեն և Սեդա Գասպարյաններին» բառերը փոխարինել «Ռիմա Գրիգորի և Արմեն Սլավիկի Գասպարյաններին» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/***

Համաձայն Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Համաձայնություն տալ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով 2024 թվականի ընթացքում մրցութային կարգով, վարձակալության իրավունքով տրամադրել համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝

համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ա. Քոսակյանը հայտնեց, որ իրավասու մշտական հանձնաժողովում հարցի քննարկման ընթացքում առաջարկվել է հողամասերի մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելու նախագծի հավելվածով սահմանված 25 տարի ժամկետը դարձնել 10 տարի:

Հարցը դրվեց քվեարկության առաջարկված տարբերակով:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68-Ա/

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ 7 ՇԵՆՔԻ ԹԻՎ 67 ԵՎ ԹԻՎ 87 ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/***

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 20-ի N 451 որոշման, հաշվի առնելով Կարեն Սողոմոնյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի մարտի 05-ի N Ք-1626), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2023 թվականի հուլիսի 25-ի N 25072023-07-0063 և մարտի 27-ի N 27032023-07-0201 վկայականներ) Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայի 7 շենքի 14.14 և 13.73 քառակուսի մետր մակերեսներով համապատասխանաբար թիվ 67 և թիվ 87 բնակարաններն անհատույց օտարել Կարեն Շահենի, Վահրամ Կարենի, Վարդան Կարենի Սողոմոնյաններին և Լենա Ռուստամի Մինասյանին:
2. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է սույն որոշման 1-ին կետում նշված անձանց կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69-Ա/

**Լսեցին**

***ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ 3 ՇԵՆՔԻ 30 ԲՆԱԿԱՐԱՆՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 199-Ն որոշման, հաշվի առնելով «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2024 թվականի հունվարի 19-ի թիվ «477-Վ/023» գնահատման հաշվետվությունը, որով անշարժ գույքը գնահատվել է 6 030 000 (վեց միլիոն երեսուն հազար) դրամ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ժորա Ֆանյանի ընտանիքը 1972 թվականից բնակվում է Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Եղբայրության փողոցի 3 շենքի 30 բնակարանում, հիմք ընդունելով Ժորա Ֆանյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի մարտի 26-ի N Ք-2152), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2023 թվականի նոյեմբերի 3-ի N 03112023-07-0212 վկայական) Աբովյան քաղաքի Եղբայրության փողոցի 3 շենքի 64.6 քառակուսի մետր մակերեսով 30 բնակարանն ուղղակի վաճառքով՝ 6 030 000 (վեց միլիոն երեսուն հազար) դրամով, օտարել Ժորա Մեխակի և Էմմա Գրիգորի Ֆանյաններին:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անձինք պարտավոր են վճարել.

1) Աբովյանի համայնքապետարանի 900105201777 հաշվեհամարին 6 030 000 (վեց միլիոն երեսուն հազար) դրամ՝ բնակարանի գինը,

2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին 73 000 (յոթանասուներեք հազար) դրամ՝ բնակելի տարածքի օտարման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճար:

3. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է սույն որոշման 1-ին կետում նշված անձանց կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Ա/

Մինչ օրակարգի նախագծի վերջին հարցին անցնելը Վ. Բաբաջանյանն արեց հետևյալ հայտարարությունները.

1) «Քաղաքացիական պայմանագիր» և «Հանրապետություն» խմբակցությունների ղեկավարներ Պավել Ցուգունյանին և Գոռ Գալստյանին հիշեցրեց, որ իրենց խմբակցություններից ավագանու երկուական անդամ մշտական հանձնաժողովներում ընդգրկված չեն և ավագանու անդամների իրավունքների և պարտականությունների հավասարաչափ բաշխման նպատակով առաջարկեց առաջիկայում ներկայացնել ավագանու անդամներ Կարեն Սերոբյանի, Վրեժ Մամուլյանի, Պետիկ Սարգսյանի և Վաչագան Գրիգորյանի թեկնածությունները՝ ավագանու մշտական հանձնաժողովներում ընդգրկելու համար:

2) «Հանրապետություն» խմբակցության ղեկավար Գոռ Գալստյանը տեղեկացվեց, որ «Հանրապետություն» խմբակցության ավագանու նոր անդամ Կարեն Սերոբյանը չի ներկայացրել իր տվյալները ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ուղարկելու համար:

3) Համաձայն ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի գրության՝ ս/թ մայիսի 8-ի դրությամբ ավագանու 12 անդամներ դեռևս չեն ներկայացրել իրենց հաշվետվությունները: Վերջիններիս առաջարկվեց հետևել ժամկետներին և մինչև ընթացիկ տարվա մայիսի 31-ը ներկայացնել հաշվետվությունները:

**Լսեցին**

***ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ  է՝***

1. Աբովյան համայքի ավագանու հերթական նիստի գումարման օր սահմանել 2024 թվականի հունիսի 26-ը՝ ժամը 16:00:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 20 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71 -Ա/

Ավագանու անդամներ

ԹԱԹՈՒԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՌԱԶՄԻԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

ԳՈՌ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ԶԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ԶԱՐՈՅԱՆ

ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԵՂՐՅԱՆ

ԱՍՊՈՒՐԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ

ՊԵՏԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՊԱՎԵԼ ՑՈՒԳՈՒՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ

*Համայնքի ղեկավար*

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ________________